Մոսուլի մարզի հյուսիսային շրջաններում հայտնի էր քրդական ալ-Հաքքարիա ցեղային միությունը[13]։ Տիգրիսի արևելյան ափի երկարությամբ բնակվում էր քրդական ալ-Բաշնավիյա ցեղը։ Այստեղ բաշնավիները հաստատվեցին մոտավորապես X դ. սկզբներին[14] և հետզհետե տարածվեցին վերին Միջագետքում։ Իբն ալ-Ասիրը (XIII դ.) նշում է, որ ալ-Բաշնավիյա քրդական ցեղին էր պատկանում Ֆանակ (Փանիկ) ամրոցը[15]։ Այս ցեղը միջնադարյան արաբական աղբյուրներում հայտնի է եղել որպես Ֆանակ ամրոցի տեր[16]։ Ալ-Կազվինին (XIII դ.) ընդգծում է, որ «Ֆանակը» բարձր լեռան գագաթին գտնվող ամուր բերդ էր, Ջազիրա Իբն Օմարից երկու փարսախ հեռավորության վրա։ Այն երեք դար շարունակ (X—XIII դդ.) գտնվել է ալ-Բաշնավիյա քրդերի տիրապետության տակ[17]։

Տիգրիսի արևելյան մասում բնակվում էին քրդական ադ-Դասինիյա ցեղերը, որոնք կրում էին Դասին լեռան անունը։ Հայտնի աշխարհագիր Յակութը (XII—XIII դդ.) այս կապակցությամբ գրում է, որ «Դասինը հրակա լեռ է Մոսուլի հյուսիսում՝ Տիգրիսի արևելյան կողմից, ուր ապրում են մեծ թվով քրդական թաիֆաներ, որոնց ասում են ադ-Դասինիա (դասինցիներ)»[18]։ Յակութի այս վկայությունը ցույց է տալիս, որ Դասին անվանումը կրել են քրդական մի շարք ցեղեր։

Արաբական սկզբնաղբյուրները Մոսուլի մարզի հյուսիսային հատվածներում հիշատակում են ալ-Համադիյա (ալ-Հումայդիյա) ցեղը[19]։ X դ. երկրորդ կեսին այս ցեղն արդեն ամրապնդվել էր արաբա-բյուզանդական սահմանային գոտում՝ Դիյար Բաքր վարչատարածքային միավորման սահմաններում[20]։ Սրա առաջնորդ Բասին հաջողվեց այս շրջաններում հիմնադրել մրվանյան քրդական իշխանությունը։ Այս ցեղն ավելի ուշ շարունակեց իր ազդեցությունը պահպանել Մոսուլի հյուսիս-արևելյան շրջանի առանձին տարածքների վրա։ Այստեղ ալ-Համադիյա ցեղին էին պատկանում Ակրը, Շուշը և այլ ամրոցներ։ Ակրը լեռներում ամրացված բերդ էր, գտնվում էր Մոսուլի արևելյան

---

13 ياقوت ، معجم البلدان ، ج . ١ ، بيروت ، ١٩٥٥ ، ص ٥٤ ، ج . ٢ ، بيروت ، ١٩٥٦ ، ص ١٨٤ ، ج . ٥ ، بيروت ، ١٩٥٧ ، ص ٤٠٨ ، ابن الاثير ، اللباب ، ج . ٣ القاهرة ، ١٣٦١ ، ص ٢٩٢ ، ابن خلكان ، وفيات ، الاعيان ، ج . ١ ، القاهرة ، ١٨٨٧ ، ص ٤٣٧ .

As-Samani, al-ansab, Leiden—London, 1912, p. 591.

14 ياقوت ، معجم البلدان ، ج . ٤ ، بيروت ، ١٩٥٧ ، ص ٢٧٨ .

15 ابن الاثير ، اللباب ، ج . ١ القاهرة ، ١٣٥٧ ، ص ١٢٧ .

16 ابن خلدون ، كتاب العبر وديوان المبتدأ والخبر ، ج . ٤ ، القاهرة ، ١٢٨٢ ، ص ٢٥٣ ، ابن الاثير ، الكامل ، ج . ٧ ، القاهرة ، ١٣٥٣ ، ص ١٤٣ - ١٤٤ ، ٣٤١ .

17 القزوينى ، آثار البلاد واخبار العباد ، بيروت ، ١٩٦٠ ، ص ٤٣١ - ٤٣٢ .

18 ياقوت ، معجم البلدان ، ج . ٢ ، بيروت ، ١٩٥٦ ، ٤٣٢ .

19 ابن خلدون ، كتاب العبر ، ج . ٤ ، ص ٢٥١ .

20 ابن خلدون ، كتاب العبر ، ج . ٣ ، القاهرة ، ١٢٨٢ ، ص ٤٣٣ ، ابن الاثير ، الكامل ، ج . ٧ ، ص ١٢١ - ١٢٢ .